

Վայոց ձորի մարզպետարանում կայացել է քաղաքացիների դեկտեմբեր ամսվա ընդունելությունը

16.12.2019



Ս./թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում կայացել է քաղաքացիների դեկտեմբեր ամսվա ընդունելությունը: Նախապես հերթագրված 126 քաղաքացիներից ընդունելությանը մասնակցել է 106-ը:

Քաղաքացիներից 100-ի դիմումները, որոնք վերաբերել են դրամական օգնություն ստանալուն, բավարարվել են:

Այլ հարցերով դիմել էին 6-ը: Բուժօգնության հարցերով՝ 3, անապահովության գնահատման <Նպաստ> համակարգում ընդգրկվելու վերաբերյալ՝ 2, հողային վեճի հարցով՝ 1 քաղաքացիների դիմումները կուսումնասիրվեն մարզպետարանի համապատասխան վարչությունների կողմից: